

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ 49-րդ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1962, ՆՈՒԵՄԲԵՐ

Ա. ՆԻՍՏ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության 49-րդ Ընդհանուր ժողովը տեղի ունեցավ Շառաթ օր, 15 Դեկտեմբեր 1962 թին, Նիւեորքի Ռուզվելթ Պանդոկին մէջ, առհասարակ տալիս մամբր Զ. Բ. Ը. Միության նախագահ Տիար Ալեք Մանուկեանին:

Ընդհանուր ժողովին մասնակցեցան 98 իւրաքանչիւր անդամներ: Ստացուած փոխանորդագիրներու թիւն էր 1853, ընդամենը 2253 ձայնով: Նայելէս ժողովին ներկայ եղաւ Պէյրուսիէն նոր ժամանած երգահան և խմբավար Տիար Համբարձում Պէրպէրեան, իրի ներկայացուցիչը Լիբանանի Շըջ. Յանձնաժողովին:

Ընդհանուր ժողովը ունէր հետեւեալ օրակարգը. —

1. Աղօթք:
2. Յարգանք հանգուցեալ հիմնադիրներու և 1962 թ. ընթացքին իրենց մահանացուն ևն ընդամենեւ յիշատակին:
3. Առհասարակ գործողութիւններ.
 - ա) Անուանում Առհասարակ Քուէախոյներու, Ընտրական և Ուղերձներու Յանձնախումբներու:
 - բ) Ներկայացում Ընդհանուր ժողովի Հրապարակներ:
 - գ) Ստուգում ներկաներու և փոխանորդներու:
4. Նախագահին Ուղերձը Ընդհանուր ժողովին:
5. Ներկայացում 1961 տարեկանի Ընդհանուր Տեղեկագրի:
6. Ներկայացում 1961 տարեկանի Հաշուական Տեղեկագրի:
7. Ելեմտական գործառնութեանց մասին հակիրճ դեկուցում Գանձապահին կողմէ:
8. Տեղեկագիր Հաշուեքննիչ Յանձնախումբին:
9. Վաւերացում Ընդհանուր և Հաշուական համարառութեանց:
10. Կանոնադրական բարեփոխութեանց հարց:
11. Մասնակի ընտրութիւն կեդր. վարչ. ժողովի:
12. Անուանում հաշուեքննիչներու 1962 տարեկանի համար:
13. Ուղերձներ:
14. Առաջարկներ և Թելագրութիւններ:
15. Գնահատանքի բանաձևեր:

1. Աղօթք. — Ընդհանուր ժողովի առաջին նիստը բացուեցաւ Հիւսիսային Ամերիկայի Արևելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Սիւն Արքեպ. Մանուկեանի աղօթքով, ժամը 11 թին:

2. — ՅԱՐԳԱՆՔ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐՈՒՆ և ԱՆԴԱՄԵՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿՈՒՆ. — Առհասարակ Տիար Ա. Մանուկեան կարգաւ անունները Միութեան այն անդամներուն որոնք իրենց մահանացուն ևն ընդամենը 1962 թ. ընթացքին: Կենսագրական հակիրճ գրծերու մէջ Առհասարակ գնահատանքով յիշեց անոնց ունեցած ազդանուէր գործունէութիւնը և ժողովակաւ ներք հրապարակեց մէկ վարչական յանդիպում իրենց յարգանքը յայտնելու Միութեան հանգուցեալ Հիմնադիրներուն, Բարեբարներուն, ինչպէս նաև նորոգ հանգուցեալներուն յիշատակին:

Ներկայացում մահանացուն կ'ամփոփուի հետեւեալ ձևով. —

Արամ Թէլեհան. — Իր մահանացուն կ'ընդ 8 նոյեմբեր 1961 թին: Ան երկար տարիներ անհետուրութեամբ ծառայած է Հ. Բ. Ը. Միութեան, իրի խորհրդական, գանձապահ և Առհասարակ Մարտիկայ Մասնաճիւղին: Ան զննատուութիւն իր երկարամեայ վաստակին, կեդր. վարչ. ժողովը գինը պարգևատրեց ՊԱՏՈՒՅՑ ԱՆԴԱՄԵՐՈՒՆ ժողովին տարիներուն հաստատուած էր Նիւ, ուր ևս Հարաւորակց ծառայել իր սիրած կազմակերպութեան:

Վանկ Թէլեհան. — Կեաւ 7 փետր 1962 թին: Փարիզ: Հ. Բ. Ը. Միութեան վեկերան Անգամ, նախկին անգամ կեդր. վարչութեան և Պատուական Անգամ Եւրոպայի կեդր. Յանձնաժողովին: Հանգուցեալը ծնած է Պոլիս, 1882 թին: 1938 թին անգամ ընտրուած է Հ. Բ. Ը. Միութեան կեդր. վարչութեան կըր կեդրոնը Փարիզ կը գտնուէր: Վարած է նաև հաշուարեան Մատենագրանի տեսչութիւնը և առաւելագէտ իր ջանքերուն մեծ մասը կողպատուէր կողմած է և շէնքին գրաւումն ալ արդիւնած է: Տիար Թրէնկեան իր կողմէ Մատենագրանին նախընտրած է 200 թանկարժէք գիրքեր և Տրիթ Թորգումանի ճոխ գրադարանն ալ ապահոված է Մատենագրանին համար:

Արմէն Մաղլումեան. — ՊԱՏՈՒՅՑ մեաւ 13 Ապրիլ 1902 թին, Հայկ. Հ. Բ. Ը. Միութեան վեկերան և ՊԱՏՈՒՅՑ ԱՆԴԱՄԵՐՈՒՆ Մարտի Շըջ. Յանձնաժողովի Պատուական Նախագահ: Իր

անուր անբարեկեցիկ կապում է Հայկական հայրենիքի և հեղինակության հետ։ Այն հիմնականում մեկն էր Ն. Բ. Բ. Միությունը։ Հայկական հայրենիքի 1911 թ. Առաջին համաշխարհային Պատերազմին ան նախա-խնամական դեր կատարում է տեղականում հայրենիքի մեջ և տասնամյակ հազար հայեր առաջ մահի փրկում է, որոնք հետևանքով ինքն ալ արտարում է, բայց գերման բարեկամե-րու շնորհիվ վերադարձում է Հայկական հայրենիքին իր թանկագին ծառայության, Սուրբ Երջ. Յաննիսիակովի գլխի պարգե-տակ Պատուական նախագահի արգելքով։ Իր անուր միջոց քանակությամբ պիտի մնայ Ն. Բ. Բ. Միությունը, ինչպես նաև Հայկական հայրենիքի տարեգրություններում մեջ։

Նոյեմբի Կիլովնիկան. — Մեռա 2 Մայիս 1962 թ., Նի. Երբ. Կոպակից արգելքի բարեկամ հան-դուցեալ Յարութի Կիլովնիկանի և մայր Կեղր. Վարդանիսիան նախկին փոխ-նախագահ Տիար Ե. Կիլովնիկանի։ Ողբակցելու հիմնա-դիր անդամներին մեկն էր Ն. Բ. Բ. Միությունը Տիկանից Կեղր. Յաննիսիակովի։

Տեք. Միլիթ Միմանան. — Մեռա 20 Յունիս 1962 թ., Աթլէր. Յունանայ գաղութին յարգը-ւած և արեւած զէմբերէն, ան եղած է Ն. Բ. Բ. Միությունը նախկին վեթերաններին մեկը և երկար տարիներ փորած է Աթլէրի Մասնա-ժողովին Առնակապետութիւնը։ Իր մահը մեծ կորուստ մը եղաւ մեր Միությունը և Աթլէրի հայ գաղութին համար։

Փարիկ Սիվակովն. — Մահացած 97 տարե-կանին, 20 Յունիս 1962 թ., Ալյուրնի, Նի. Երբ. 1910 էն ի վեր առաջնորդող գիր կատարած է Ն. Բ. Բ. Միությունը շրջանակներում մեջ, մա-նուանց Ալյուրնի Մասնաճիւղին մեջ։ Կեղր. Վարդանիսիան գլխի մեծարած է ՊԱՏՈՒՅ Ան-ԳԱՄԻ տնտեսով, իսկ Ալյուրնի Մասնաճիւղը գլխի բնորած է Յիկանա նախագահ։

Յովնանեւ Կարման. — Առաքի Մասնաճիւ-ղին կազմութեան օրերուն միացած է Բարե-գործականին և երկար տարիներ գործած է հասարակութեամբ։

Յարգանքով կը յիշենք նաև Ամերիկայի շրջանէն հեռեկան կորուստները. — Ռերեկա Միւշեան, Ռերեկա Քէշիշեան, Յովհաննէս Թէրթանեան, Տործ Պէլլըն, Յակոբ Նալպանտ-եան, Նոյնիկար Երիկանեան Հիմնա Պաշտան, Նան Կրճեան, Յարութի Միմանեան, Վահան Դասարճեան և Վահան Տէր Ղազարեան։

3. ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ. —

ա) Անուանում Ասեղակովի և Յաննիսիակովի-րու. — Կանոնադրի արամականութեան համա-ձայն, Առնակապետ ընդհ. ժողովին Առնա-դրի նշանակեց Տիար Տիգրան Պոյաճեանը, որ անմիջապէս ձեռնարկեց իր պաշտօնին։

Առնակապետ զանազան յանձնարարներու նշանակումը կատարեց հեռեկան կերպով. —

Ընտրական Յաննիսիակովի. — Տեարք Յանիկ Նոր-հա, Երուանց Մաթեան և Պարոտ Նո-րիկեան։

Փառախոյ Յաննիսիակովի. — Տեարք Սարգիս Քէրթիկեան, Երուանց Քալուպեան և Հասարակ Աթլէրեան։

Ուղեւորական Յաննիսիակովի. — Տեարք Անդրա-նիկ Փոյաճեան, Քերթիկ Պաշտեան և Անդրանիկ Անդրէասեան։

բ) Ներկայացում Ընդհ. ժողովի Հաւելակովի. — Ընդհանուր Տնօրէն Տիար Գրիգոր Կրեկոսեան ներկայացուց 45-րդ Ընդհ. ժողովին Հրաւիրա-դիրը, որ իր ասեղին զրկուած էր Միությունը բոլոր իրաւասու անդամներուն և հաստա-րակուած արտասահմանի թէ Ամերիկայի հայ թերթներուն մեջ։ Ընդհ. Տնօրէնը կարգաց ա-նունները 22 թերթներու, որոնց մեջ հրաւիրա-դիրը յայտ առած էր։

գ) Աստղում ներկաներու և փոխանորդակներու. — Փառախոյ Յաննիսիակովի ներկաներու և փոխանորդակներուն թիւը ստուգած ըլլա-լով, ժողովը օրինաւարակա բացուած յայ-տարարեցաւ։ Իրաւասու անդամներու և փո-խանորդակներուն թիւը յիշուած է արդէն առնակապետեան պիւլբլի։

4. ՆԱԽԱԳԱՀՆԵ ԲԱՅՄԱՆ ԸԱՌԻ. — Ժողովի այս նախագարատական աշխատանքներին ետք, Առնակապետ Տիար Ա. Մանուկեան կար-գաց իր բացման հառը։ Ան հակիւրճ կերպով անդրադառնալէ յետոյ Միությունը 57 տարի-ներու ընթացքին կատարած ազգանուէր ծա-ռայութեանց մասին, յայտնեց թէ Բարեգոր-ծականի Կեղրնը Ամերիկա փոխադրուելէն ի վեր ան մեծ վերելք մը արձանագրած է, մաս-նաւորաբար Ամերիկահայերու առատածնուն նուիրատուութեանց շնորհիւ իր զրամադրա-նորու գումարներուն վրայ զգալի բարգաւա-նարարութեամբ։ Ըստ նախագահին յայտարարու-թեան զարմեալ, երբ 1910-ին Կեղրնը փարիզէն Նի. Երբ. կը փոխադրուէր, Միությունը Ընդհա-նուր հարստութիւնը 3,800,000 տոլար էր։ Այս գումարին զէմ, այսօր, 1962 թ., այդ հարստու-թիւնը տամարական արժէքով բարձրացած է մօտ 11,000,000 տոլար, իսկ իրական արժէ-քով՝ մօտ 14,000,000 տոլար։ Այս թուանշան-ները յայց կու տան որ Կեղրնը Ամերիկա փոխադրուելէն 22 տարիներ վերջ Միությունը հարստութիւնը աւելի քան եռապատկուած է։

Նախագահը ներկայացուց նաև Միութեան կողմէ տարած տարի կատարուած յատկա-ցումներու գումարները, կրթական, մշակու-թային և բարեխրական նպատակներու հա-մար։ Ան աւելցուց թէ 190 - 1940, 34 տարինե-րու ընթացքին, մեր ազգին կարիքներուն արամագրած ենք 5 միլիոն տոլար գումար մը, իսկ 1940-էն առիւն, այսինքն վերջին 21 տարիներուն, Բարեգործականը ազգապահ-պանման իր զանազան ձեռնարկներուն համար ծախսած է մօտ 10 միլիոն տոլար։

Նախագահը այս բաղդատական ցուցակները տալիս է չեղարկել հետք թել իր նպատակը չէ թերզնահատել մեր օրհնեալ կազմակերպութեան անցեալի ծառայութիւնները, բնորոշակ բացատրութիւններ առաւ Միութեան իրաւական անձնաւորութեան կամ չնպատակութեան փոփոխութեան կապակցութեամբ, որ կատարուեցաւ 1955 թ. Ընդհ. Ժողովի որոշումով: Յետոյ անդրադարձաւ երկու տարիէ ի վեր այս հարցին շուրջ ստեղծուած դժբախտ ու ցաւալի կացութեան, որուն մէջ եւրոպայի Շրջանակի Յանձնաժողովին անդամները անբաղձալի զերմը կատարած էին և կը կատարեն, հակառակ կեղծ վարչութեան և Նախագահին անձնապէս բրած բազում իրաւախոհական մերձեցումներու փորձերուն:

Ան խտտորէն դատապարտեց այդ տխուր զերմը ստանձնող և հետապնդող մարդոց աւարքները, որոնք Միութեան թէ հայ ժողովուրդին շահերուն ֆուսելու միայն կրնան ծառայել: Տխր Մանուկեան յայտնեց նաեւ թէ կեղծ վարչութիւնը եւրոպայի կեղծ Յանձնաժողովին անդամները պաշտօնէ դադրեցուցած է և ցնոր տնօրինութիւն Ֆրանսայի մէջ մեր ձեռնարկներուն մատակարարութիւնը յանձնած է մասնաւոր ներկայացուցիչի մը, որ ամենէն հին մէկ անգամն է պաշտօնագուրի այս Յանձնաժողովին:

Նախագահը աւելցուց թէ 1962 թ. Հոկտեմբերին այս պաշտօնագուրի Յանձնաժողովը Լուզանի մէջ դատ բացած է կեղծ վարչութեան դէմ, պահանջելով ոչ միայն 1955 էն աստիճանի Միութեան օրինական կարգուսարքին քննումը, այլև 1946 թ. Ամերիկա փոխադրուած կեղծներին Փարիզ փերադարձումը, ելին: Տխր Մանուկեան բաւ նաեւ թէ ի՞նչ որ ալ բլլայ դատարանին յիշուր, մեր կազմակերպութեան իրաւունքներուն պաշտպանութիւնը կամ անոր հետեւիք ուղղութիւնը որոշող զերազոյն մարմինը այս պատկառելի ժողովն է միայն:

Նախագահը իր խօսքերուն վերջ տուաւ, խնդրելով որ Միութեան ամէն մէկ անդամ զսպէ իր հասկնալի փրգովումը և սրտի անդորրութեամբ կատարէ իր պարտականութիւնը, որոնց կատարեալ յաջողութիւն մաղկելով բացուած յայտարարեց այս 49րդ Ընդհանուր ժողովը:

5. ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ 1961 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ԸՆԴՀ. ՏԵՂԵԿԱԳՐԻՆ. — Ընդհ. Տնօրէն Տիար Գ. Կիրակոսեան կարգաց կեղծ վարչ. ժողովը 1961 տարեշրջանի գործունէութեան բնորոշակ Տեղեկագիրը, մաս մը ամբողջութեամբ, ուրիշ մասեր կրճատուներով և ամփոփումներով, ստանձնապէս ծանրանալով կրթական բաժնին վրայ: Ժողովականները ի ձեռին ունէին 71 էջերէ բաղկացած Ընդհ. Տեղեկագիրն բազմազրուած հայերէն և անգլերէն օրինակները: Վիճակագրական տուեալներով և թուաշաններով, Տիար Կիրակոսեան հետեւեալ խօս-

տուն պատկերը ներկայացուց Միութեան մէկ տարուան բնորոշականաւ գործունէութեան:

ա) Ընդհանուր Անդամակցութիւն. — Միութիւնը կազմակերպութիւններ ունի 19 երկրներու մէջ, 186 մասնաճիւղերով և 17,767 անդամներով:

բ) Կսակներ և Նախաւորութիւններ. — 1961 թ. ստացուած է 210,600 տոլար:

գ) Ցաւկացում. — Նոյն տարեշրջանին ազգապահպանման ձեռնարկներու համար ծախսուած է մօտ 69,000 տոլար:

դ) Կրթական. — Հ. Բ. Ը. Միութիւնը ունի 14 սեփական վարժարաններ, որոնց մէջ կ'ուսանին 3,914 երկսեռ աշակերտներ: անոնց մէջ կը պաշտօնավարեն 238 ուսուցիչներ:

Այս վարժարաններէն չորսը երկրորդական կրթութեան յատուկ հաստատութիւններ են, որոնցմէ ցարդ չբնաւարտ եղած են 993 երկսեռ պատանիներ: Միութեան 14 դպրոցներէն 11 բերեց արդիական գեղեցիկ շէնքեր ունին, 922,000 տոլար արժեքութեամբ Միութիւնը կ'օգնէ նաեւ 95 ազգային, յարանաւանական և մասնաւոր դպրոցներու իր դպրոցական գործին համար ծախսած է 355,500 տոլար:

ե) Կրթաբուհներ. — Կրթաթոշակ տուած է 223 համալսարանական և արհեստագիտական ուսանողներու՝ 42,440 տոլար: Ցարդ համալսարանական բնիկացք աւարտած են 87 ուսանողներ:

զ) Մեակութիւնի Զեւնարկներ. — Հայ երիտասարդական շարժման, օգտակար հրատարակութեանց, նոր դպրոցներու կառուցման համար ելին յատկացուած է 164,000 տոլար:

է) Խնամաւորական Դարձ. — Դարձանատուներու, մեծաքանակ փողի կաթիլ, կարօտեալներու օգնութեան համար ելին մօտ 57,000 տոլար:

6. ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ 1961 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՀԱՇՈՒՒՂԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻՆ. — Վկայեալ Հաշուապետ Տիար Ս. Արսունի Ընդհ. ժողովին ներկայացուց 1961 տարեշրջանի հաշուական տեղեկագիրը, որ կը բաղկանար 33 էջերէ և որուն անգլերէն լեզուով ամփոփ օրինակները բաժնուած էին ժողովականներուն: Այս տեղեկագիրն ցուցումներուն համաձայն, 31 Դեկտեմբեր 1961 թ. Միութեան բնիկանուր հարստութիւնը եղած է 10,825,372.70 տոլար. իր բնիկանուր մուտքը եղած է 852,239.94 տոլար, իսկ ելքը՝ 885,561.73 տոլար:

7. ԶԵԿՈՒՅՈՒՄ ԴԱՆՁԱԳԱՀԻՆ ԿՈՂՄԷ. — Կեղծ վարչ. ժողովի Դանձապահ Տիար Զ. Դարակեօեան ևս անդրադարձաւ հաշուական տեղեկագիրն և հակիրճ զեկուցում մը բրաւ Միութեան արժեքութիւններուն տոմարական և սակարանի գիներուն մասին: Այս տեղեկատուութիւնէն տեսնուեցաւ որ Միութեան արժեքութիւնը այս տարի ևս շահաբեր եղանակով մը մատակարարուած էին:

8. Տեղեկագիրի ՀԱՇՈՒՆՔՆԵՐԻ 2 ՑԱՆՁՆԱԽՈՒՄԵՐԻ. — Առենայեցեա Տիար Թէֆթ Մարտիրոսեան ներկայացուց Բանձնախումբին Տեղեկագիրը, յայտնելով թէ ինք հ ընկերը՝ Տիար Պետրոս Թէրզեան քննած էին կեղք. վարչութեան հաշիւները հ գտած էին կանոնաւոր ու գոհացուցիչ: Բանձնախումբին երրորդ անգամը՝ Տիար Ռէշերա կրէկորի, արգելիչ պատճառով չէր կրցած իրենց ընկերանայ:

Տիար Մարտիրոսեան զիտել տուաւ թէ Միութեան հաշիւները ընդարձակ էին և բարդ և թելագրեց որ մասնագիտական պատրաստութիւն ունեցողներ նշանակուին քննութեան համար: Նախագահը բաւ թէ կեղք. վարչութիւնը նկատի պիտի առնէ այս թելագրանքը, բայց միանգամայն յայտնեց որ Հաշուապետ Տիար Արտուրի Վկայեալ (C. P. A.) հաշուապետ մըն է, որուն ներկայացուցած հաշիւները պաշտօնական հանգամանք ունին որեւէ տեղ: Ժողովին Ա. Նիստը փակուեցաւ ժամը 1 ին:

Բ. ՆՈՍ

Ընդհ. Ժողովին Բ. Նիստը սկսաւ կէսօրէ ետք ժամը 2.30 ին:

9. ՎԱՆԵՐԱՑՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՀԱՇՈՒՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐՈՒ. — Ժողովականներու կողմէ զանազան հարցումներ և բացատրութիւններ խնդրուեցան թէ՛ ընդհանուր և թէ՛ հաշուական տեղեկագիրներու մէջ յիշուած կարգ մը նիւթերու մասին: Նախագահին ու հարկապետին տուած լուսարանութիւններէն ետք, առաջարկուեցաւ և երկրորդուեցաւ փաւերացնել կեղք. վարչութեան Ընդհանուր և Հաշուական Տեղեկագիրները: Ժողովը գնահատանքով և ծափերով ընդունեց և փաւերացուց զանոնք:

10. ԿԱՆՈՒՄԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՌՈՒԹԵԱՆՑ ՀԱՐՑ. — Այս հարցին նկատառումը յատուկային յետաձգուեցաւ:

Այս առթիւ, Ժողովականներէն ոմանց խնդրանքին վրայ, Նախագահը մանրամասնօրէն ներկայացուց կեղք. վարչ. Ժողովին և Եւրոպայի կեղք. Բանձնաժողովին միջև ծագած տարակարծութիւնները և անոնց ներկայ վիճակին հասնելուն տխուր պատճառները: Նախագահին տուած ընդարձակ լուսարանութիւններէն յայտնի եղաւ որ կեղք. վարչ. Ժողովը անկեղծօրէն ջանացած էր այս վէճին բարուրդ լուծում մը գտնել. խառնաձայնութեամբ և Բարեգործականի անմիջական շրջանակին մէջ, բայց իր համբերատար բոլոր փորձերը ապարդիւն մնացած էին: Ժողովը ցաւով արձանագրեց Փարիզի խմբակին դատարան դիմելու արարքը և միաձայնութեամբ քուէարկեց հետեւեալ բանաձեւը. —

«Զորք Ընդհանուր Ժողով, լսելէ վերջ Նախագահ Տիար Ա. Մանուկեանի ձառն ու բերանացի յաւելուածական բացատ-

րութիւնները ի պատասխան զանազան հարցումներու, անարդարանալի կրգտնէ Փարիզի անջատողական խմբակին առարքները և կ'այսպէս ու կր դատապարտէ Հ. Բ. Ը. Միութեան միասնականութեան և բարօրութեան համար ֆասակար եղող անոր գործունէութիւնը: Այս առթիւ, Ընդհ. Ժողովն միաձայնութեամբ զօրավիշ կը կանգնի կեղք. վարչութեան և անվերապահ վատահոսութիւն կը յայտնէ անոր՝ այս ցաւալի կացութիւնը զիմաւորող իր ձեռնարկներուն և ջանքերուն համար:»

11. ՈՒՂԵՐՁՆԵՐԻ. — Առենայեցեալ հրաւերով խօսք առաւ Պէյրութէն երաժշտապէտ Տիար Համբարձում Պէրպէրեան, որ, ինչպէս վերը բաժնի, Լիբանանի շրջանակը կր ներկայացնէր: Ան յայտնեց թէ Լիբանանի մէջ Բարեգործականի ընդհանուր շրջանակը բացարձակապէս համոզուած է որ Ամերիկա լաւագոյն կեղքունավայրն է մեր Միութեան, և թէ ամէն ոք կը հիանայ այն հոյակապ գործունէութեան վրայ զոր ցոյց տուած է կեղքունը: Մեր շրջանակը, բաւ ան, երախտապարտ է միշտ և է՝ Ամերիկահայերուն՝ իրենց սրանշելի զոհողութեանց համար: Տիար Պէրպէրեան ներկայացուց նաև Լիբանանի շրջանակի բաղձանքը տեղւոյն վրայ հաստիքներ կալուածներ ունենալու մասին և իր խօսքերը վերջացուց նոյն շրջանակի լման հաւատարմութիւնը կրկնելով կեղք. վարչութեան:

Տիար Պէրպէրեանի ուղերձին կապակցութեամբ Նախագահը յայտնեց թէ անհնար չէ որ ապագային ձեռնտու պայմաններու ներքե Ընդհ. Ժողովը գումարուի Ամերիկայէն դուրս ուրիշ վայրերու մէջ: Անդրադառնալով Լիբանանի երկու կազմակերպութեանց հարցին, որուն ակնարկած էր Տիար Պէրպէրեան, Նախագահը գովեստի խանդավառ խօսքեր ըրաւ անոր գործունէութեան մասին, շեշտեց թէ կեղքունը միշտ սիրով կը քաջալերէ այդ կազմակերպութիւնը, բայց կ'ակնկալէ որ Լիբանանի շրջանակը ևս յանձնառու ըլլայ զոհողութեանց:

12. ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԵՐԻ. ՎԱՐՁ. ԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ. — Նախագահը յայտարարեց թէ կեղք. վարչ. Ժողովի հինգ անգամներ՝ Տեաք 2 արդ Քարակէօղեան, Տիգրան Օյաշեան, Ռիշերտ Տօրեան, Եղուարդ Աղաձանեան և Յակոբ Տէրտէրեան, իրենց պաշտօնավարութեան շրջանը աւարտած էին, իսկ վիցերորդ անգամ մըն ալ՝ Տիար Հայկ Քափուքեան, տարւոյն սկիզբը հրաժարած էր կեղք. վարչութեան անդամակցելէ: Ընտրական Բանձնախումբի Առենայեցեա Տիար Օննիկ Նորհատ ներկայացուց ընտրելիներու երկպառակցանկ մը, որուն վրայ կր գտնուէին նաև զաւարեալ անգամներու անունները, քանի որ, բոլոր կանոնադրի, անոնք վերընտրելի են:

Գաղանի քուէարկութեամբ վերընտրուեցան Տեարք Զարգ Գարակէօղեան, Ռիշրբա Տօրեան, Եղուարդ Աղանանեան, Տիգրան Պոյաճեան և Յակոբ Տէրաւերեան: Իսկ իբրեւ նոր անդամ ընտրուեցաւ Տիար Ոննիկ Պետրոսեան:

13. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՀԱՇՈՒԵՔԵՆԻՉ ԵԱՆՁՆԱԽՈՒՄԻ. — Ձեռամբարձ քուէով և միաձայնութեամբ Հաշուերենիչ Յանձնախումբի ընտրութեան համար քուէի իրաւունք տրուեցաւ Ատենապետին, որուն մէկ քուէով ընտրուեցան հետեւեալները իբրեւ անդամ V ՍԻ Հաշուերենիչ Յանձնախումբի. — Տեարք Պետրոս Թէրզեան, Թէֆիմարտիոսեան և Ռիշրբա Վրէկաբի:

14. ԳԵԱՆԱՏԱՆՔԻ ԲԱՆԱՁԵԻԵՐ. — Ուղերձներու Յանձնախումբի կողմէ Տիար Ա. Փոլաւեան Ընդհ. ժողովին ներկայացուց հետեւեալ Գնահատանքի բանաձեւերը. դորս ժողովը միաձայնութեամբ որդեկրեց:

ա) Հ. Բ. Ը. Միութեան 40րդ Ընդհանուր ժողովը յարգանքով և երախտագիտութեամբ կը յիշէ Միութեան երանելի հիմնադիրներուն, մեծահոգի բարեբարներուն, ազգանուէր մատակարարներուն և զօնաբերող անդամներուն անուններն ու գործերը:

բ) Ընդհ. ժողովը իր հաստատմութիւնն ու երախտագիտութիւնը կը յայտնէ Ամերիկայի Միացեալ Նահանգներու լայնախոհ կառավարութեան և անոր կորովի նախագահին՝ Ճոն Թ. Քէնէտին ջանքերուն կատարեալ յաջողութիւն կը մագթէ:

գ) Ընդհ. ժողովը իր որդիական յարգանքն ու սէրը կը մատուցանէ Ամենայն Հայոց Սրբապետին Ն. Ս. Ս. Վաղգէն Ա. ին և կը գնահատէ իր շինարարական անդուլ աշխատանքները:

դ) Ընդհ. ժողովը իր երախտագիտութիւնը կը յայտնէ Միութեան զոյգ Պատուակալ Նախագահներուն՝ Տեարք Զարեհ Պէյ Նուպարի և Արշակ Գարակէօղեանի, անցեալին իրենց մատուցած ծառայութեանց և ներկայիս Միութեան հանդէպ ցոյց տուած շահագրգռութեանց համար, և իրենց կը մագթէ արեւշատ նոր տարիներ:

ե) Ընդհ. ժողովը կը գնահատէ Միութեան կեդր. Վարչ. ժողովին նախագահ Տիար Ալեք Մանուկեանի և իր պաշտօնակիցներուն խմատուն առաջնորդութիւնն ու նուիրեալ գործունէութիւնը: Նոյնպէս, Ընդհ. ժողովը իր բացարձակ մատահանութիւնը կը յայտնէ և հաստատմութիւնը կը հաստատէ կեդրոնին հանդէպ՝ Միութեան հիմնական նպատակներն ու միասնականութիւնը պահպանելու ձգտող իր նախանձախնդիր ու հեռատես ջանքերուն համար:

զ) Ընդհ. ժողովը կը գնահատէ Միութեան Ընդհ. Տնօրէն Տիար Դրիգոր Կրեակոս-

եանի ձեռնհաս ու նուիրեալ գործունէութիւնը, ինչպէս նաև կեդրոնական Գրասենեակի պաշտօնէսէին անհատները:

է) Ընդհ. ժողովը յարգանքով կը յիշէ Միութեան Ամերիկայի Շրջանակի Հիմնադիր, հանրային ու գրական մշակ Վահան Մ. Գրեքճեանի յիշատակն ու մատակը:

ը) Ընդհ. ժողովը կը գնահատէ արտասահմանի մարմիններուն գործունէութիւնը, ինչպէս նաև՝ ներկայ զմարտութեանց շրջանին՝ կեդրոնին հանդէպ իրենց ցոյց տուած մատահանութիւնն ու գործակցութիւնը:

ր) Ընդհ. ժողովը սիրով կ'ողջունէ Միութեան Լիբանանի Շրջանակին պատգամաւոր և ծանօթ երգչահան - խմբավար Տիար Համբարձում Պէրպէրեանի ներկայութիւնը մեր մէջ, որ իրենց կրթական և երիտասարդական գործունէութիւնն իսնդամաւ անկեկոսիք ենք ու փափաքներ հաղորդել եւս, Լիբանանի Շրջանակին հաստատմութիւնը յայտնեց կեդրոնական Վարչութեան և երախտագիտութիւնը՝ Ամերիկահայ զօնաբերող զաւուրին:

ճ) Ընդհ. ժողովը կը գնահատէ Ամերիկաներու և արտասահմանի հայ մամուլին այն մշակները որոնք սիրով կը արամադրեն իրենց թերթին սինակները Բարեգործականի ազգայնականման ձեռնարկներուն, ինչպէս նաև իրենց խմբագրականներով պաշտպան ու սատար կը հանդիսանան անոր:

Ճա) Ընդհ. ժողովը իր շնորհակալութիւնը կը յայտնէ 40րդ Ընդհ. ժողովի Գիտանին Ատենապետ Տիար Ալեք Մանուկեանին, Ատենապետ Տիար Տիգրան Պոյաճեանին, ինչպէս նաև Ընդհ. ժողովի գանազան Յանձնախումբերու Ատենապետներուն և անդամներուն:

15. ՓԱՅՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ. — Ընդհ. ժողովը որակարգել հարցերը աւարտած ըլլալով, Ատենապետին կողմէ կարդացուեցաւ Ա. և Բ. Նխատելու ատենագրութիւնը և ժողովը գաւերացուց զայն:

Ընդհանուր ժողովը վերջ գտաւ ժամը 6ին:

Գիւնն Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

40րդ Ընդհանուր ժողովի

Ատենապետ

ՏՐԻԳՈՐ ՊՅՈՒՆԵԱՆ

Ատենապետ

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նիւ Եոթ, 15 Դեկտ. 1962

